AraratBank

«Ազգային հիփոթեքային ընկերության» ծրագիր՝ բնակելի անշարժ գույքի վերանորոգման նպատակով տրամադրվող հիփոթեքային վարկ

Մինչ 03.01.23թ. գործող պայմաններ.

Վարկառու	20 տարին լրացած ՀՀ քաղաքացի և ռեզիդենտ ֆիզիկական անձ, որը հանդիսանում է վերանորոգվող բնակելի անշարժ գույքի սեփականատեր կամ համասեփականատեր: Վարկառուի տարիքը չի կարող գերազանցել 55 տարեկանը:
Համավարկառու	20 տարին լրացած ՀՀ քաղաքացի և ռեզիդենտ ֆիզիկական անձ, որը հանդիսանում է վարկառուի ընտանիքի անդամ և որի տարիքը չի կարող գերազանցել 55 տարեկանը:
Վարկի նպատակ	Բնակելի անշարժ գույքի վերանորոգում:
Արժույթ	ՀՀ դրամ
Վարկի նվազագույն գումար	3,000,000 ՀՀ դրամ
Վարկի առավելագույն գումար	35,000,000 ՀՀ դրամ
Գրավի առարկա	Վերանորոգվող բնակելի անշարժ գույք:
Վարկ/Գրավ հարաբերակցություն	Մինչև 50% վերանորոգվող բնակելի անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքի:
Վարկի ժամկետ	60 - 120 ամիս
Տարեկան տոկոսադրույք	12% տոկոս
Տարեկան փաստացի տոկոսադրույք	12.75% - 14.21%
Վարկի տրամադրման եղանակ	Փուլային:
Վարկի մարումների գրաֆիկ	Անուիտետային
Վարկի և տոկոսագումարների մարումներ	Ամենամսյա
Վարկի տրամադրման եղանակ	Անկանխիկ
Վարկառուի և համավարկառուների դժբախտ պատահարներից և վերանորոգվող գույքի ապահովագրություն	Պարտադիր, յուրաքանչյուր տարի, վարկի մնացորդի չափով, կատարվում է բանկի կողմից՝ շահառու պետք է հանդիսանա բանկը:

Ժամկետանց պարտավորությունների (մայր գումար և/կամ տոկոսագումար) գծով տույժ	Օրական 0.13%
Վարկառուի և համավարկառուների վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ	Վարկային հայտի ներկայացման նախորդ 12 ամիսների ընթացքում ժամկետանց կամ դասակարգված պարտավորությունների բացակայություն (բացառությամբ մարված երաշխավորությունների) և ժամկետանց պարտավորությունների օրերի հանրագումարի ոչ ավել, քան 30 օր:
Վարկունակության վերլուծություն	Վարկի մարման գծով ամսական վճարի հարաբերակցությունը Վարկառուի (Համավարկառուների) զուտ եկամտին չպետք է գերազանցի 35 տոկոսը: Վարկի մարման գծով ամսական վճարումների, Վարկառուի և Համավարկառուների այլ երկարաժամկետ ամսական ծախսերի գծով վճարումների (այլ վարկերի գծով վճարումներ, ալիմենտ, ուսման վարձ, վարձակալության վճար և այլն) հանրագումարի հարաբերակցությունը Վարկառուի (Համավարկառուների) զուտ եկամտին չի գերազանցում 45 տոկոսը:
Հայտի ուսումնասիրության վճար	5.000 ՀՀ դրամ:
Վարկի սպասարկման վճար	Միանվագ վարկի տրամադրման օրը վարկի գումարի 1% չափով, առավելագույնը՝ 200.000 ՀՀ դրամ: